րակոսի զայս լուր աղետալի, առաքեաց զոմանս 'ի միաբանից և ետ ածել զբեւրինս նորա յԵրուսաղէմ։ Յաւուրս Կիրակոսի նորոգեցաւ եւ ծեփեցաւ եկեղեցին Յովհաննու Աւետարանչի՝ 'ի գաւիթ Տաճարին Ս. Յարութեան, զորոյ պատկերազարդ մարմարիոն քարինս արար յիշատակ Պուլանիսցի Թադէոս վարդապետ։ Սովորութիւն է միաբանութեան Ս. Աթոռոյն Երուսաղէմի, յետ կատարելոյ զտօն Ս. Պասեքին 'ի Տաճարին Ս. Յարութեան, յաւուրն երկրորդի առնել հանդէս նաեւ 'ի Տաճարի Ս. Յակոբայ, օրհնել զուէրունական ուխտաւորս, եւ մաղթել նոցա բարի ճանապարհ, և 'ի նմին աւուրն Պատարագիչն լինի նոյն իսկ Գահակալ Ս. Աթոռոյն, և զկնի Պատարագին Թափօր մեծահանդէս 'ի մխիթարութիւն ժողովրդոց։ Եւ 'ի սմին ամի յետ կատարելոյ Կիրակոս Պատրիարքի զփրկարար խորհուրդն և զհանդէս Թափօրին և մեկնելոյ ժողովրդոց յիւրաքանչիւր տեղիս, և ահա յերկիր ժամու աւուրն ճառագայթեցաւ Լոյս պայծառ 'ի մատրանէ Ս. Գլխադրի Ս. Յակոբայ և անտի տարածեցաւ 'ի բովանդակ եկեղեցին, եւ սկսան լուցանիլ շիջեալ կանթեղքն․ լուեալ զայս բազմութեան ուխտաւորաց դիմեցին յեկեղեցին, և բազումք եւս դարձան յետս 'ի ճանապարհէ․ եկին նաեւ յայլազգեաց և յօտարաց և խռնեցաւ բազմութիւն մեծ, և սքանչանային 'ի տեսիլ ահաւոր նշանին, և Կիրակոս Պատրիարք ընդ որ և միաբանք Աթոռոյն երկուցեալ 'ի բազմութենէ ետուն փակել զդրունս եկեղեցւոյն, զի մի գուցէ վնաս ինչ պատահեսցի, սակայն լուցան նաեւ լապտերքն որք էին 'ի գաւթի անդ, և այսպէս տեւեալ սքանչելիքն ժամս իբր երեք, և հանդիսականք փառս տուեալ Աստուծոյ դարձան ուրախութեամբ 'ի տեղիս իւրեանց, ('ի 12 Ապրիլի․ 1848)․ Կիրակոս Պատրիարք յատուկ կոնդակաւ հրատարակեաց զհրաշալի պատահումն 'ի հայաբնակ գաւառս և 'ի քաղաքս։

Յաւուրս սորա Լատինք քակեցին զորմս Բռասանից Այրին 'ի Բեթղեհէմ, զոր իւրեանք կոչեն Կաթէն Այր, և կամէին միայնակ շինել զայն եւ սեփհականել իւրեանց․ իսկ Պատրիարքունք Հայոց եւ Յունաց բողոք բարձին 'ի Դուռն և առ կուսակալն Ասորեաց, թէ՝ Այրն է ուխտատեղի երից ազգաց, և ուխտաւորք նոցին ոչ պակասին